

Ս. ՀԱԿՈՐՅԱՆ

ՓԱՍՏԵՐ ԶՈՐՏԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՃԱՌՔԻ
ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Առաճճնատիպ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի 1947 թ.

№ 5 «Տեղեկագրից»

3(47.325)

27281

2-17 | Հակոբյան, Ա.

Փաստեր հարկեր և նրանց կանախ
նախնի հրահրարյան Հայաստանում:

9/12

441

9(17-925)12

ՍՏՈՒԳԱՍԻ Է 1951 թ.

Պ. Հակոբյան

ՓԱՍՏԵՐ ՃՈՐՏԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մեր պատմաբանները միջնադարյան Հայաստանի տնտեսական պատմության հարցերով բավարար չափով չեն զբաղվել: Դեռ քննություն առարկա չեն հանդիսացել մեր մատենագիրների և հատկապես ձեռագիր տղայուհիների այն բոլոր տեղեկությունները, որոնք նոր և հավասարի վկայություններ են տալիս միջնադարյան Հայաստանի տնտեսական, սոցիալական հարաբերությունների, առանձնապես գյուղացիության վիճակի մասին:

Մեր ներկա երկտղի նպատակն է՝ հրապարակ հանել միայն մի քանի կարևոր, մեր կարծիքով, պատմական նշանակություն ունեցող փաստեր և ապացուցել, որ մեզ մոտ ևս միջին դարերում ճորտեր ու ճորտերի վաճառք գոյություն են ունեցել:


Ֆեոդալական Հայաստանում, ինչպես ամենուրեք, արտադրող հիմնական դասակարգը հանդիսանում էր գյուղական ընակչությունը:

Որքան մեզ հայանի է, հին հայ մատենագիրներին անձանոթ էր «ճորտ» տերմինը: Հասարակական ստորին դասերի համար մեր պատմիչները գործ են ածում ընդուն տերմիններ— շինական, ասմիկ, գեղջուկ, ծառա, աղախին, ստրուկ և ամրոխ:

Ստրուկների, շինականների, ասմիկների, աղախների և նախարարների սոցիալական դրությունը և քաղաքական ու ժառանգական իրավունքներն արտահայտվում էին բոլորովին իրար հակադիր դարձվածքներով և տերմիններով: Ստրուկական վիճակը իր արտահայտությունն էր գտել «ի կարգի ստրկութեան», «ստրկութեան ծառայութիւն» դարձվածքներում, իսկ շինականների մասին խոսելիս՝ մեր մատենագիրները միշտ էլ դործածում են «ի հարկի ծառայութեան» կամ «ծառայութիւն» կամ լրափին և վիճակ ծառայութեան», ցույց տալով այդ դասերի ոչ արտոնյալ, ստրկական և հարկատու վիճակը:

Այդ դարձվածքները գառնում են ավելի որոշակի, երբ մատենագիրները ցանկանում են արտահայտել իշխող դասերի քաղաքական և ծառայական-վաստալական իրավունքները ու միշտ և ամեն քայլափոխին նրանց հակադրում են շինականների, ստրուկների, ասմիկների անաղատ կացությունը: Եթե ստրուկների և շինականների մասին նրանք գործ են ածում վերոհիշյալ տերմինները, ապա նախարարների և ազատների վաստալական-ֆեոդալական ծառայության համար ունեն նրանց դրությունը համապատասխան տերմիններ. այսպես, օրինակ՝ «ի սպասու ծառայութեան», «ի կարգի ծառայութեան» կամ «արքունի ծառայութիւն»:

Ֆեոդալական արտադրական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց՝ միջնադարյան Հայաստանում հանդես է գալիս և քաղաքացիական իրավունք է ստանում նոր տերմինը, որը որոշակի արտահայտում է



գյուղացիները ճորտական կացութիւնը: Անշուշտ, միջնադարյան արեւելյան Հայաստանը տնտեսական և հասարակական հարաբերութիւնները տնտեսկետից միատարր և միօրինակ ընդոյթ չունէր: Երկրի տարբեր մասերում հողային տիրապետութեան և հարկային սխտեմի տարբեր հարաբերութիւններ են եղել: Արտադրութեան հիմքը այս շրջանում հանդիսանում էր հողի մասնավոր սեփականութիւնը, իսկ հողային հարաբերութիւնների նյութական հետեանքը և հատուկ հատկանիշը՝ հողային հարկերը: Բացի հողային հարկերից՝ մեր աղքատները, արդեն մասսայաբար, հիշատակում են նաև հարկադիր աշխատանքի և կոռային պարտավորութիւնների առկայութիւնը միջնադարյան Հայաստանում: Ֆեոդալական հարաբերութիւնները ամառը զուգընթաց՝ հին Հայաստանի արտադրող հիմնական դասերը—աւանդներն ու շինականները—քայքայվում էին, կորցնում էին իրենց արտադրական միջոցները, զրկվում էին հողակտորից և տնտեսական կախման մեջ էին զրկվում հողատիրոջից: Գյուղական բնակիչների այս խավերն արդեն ճորտացվում և հանդիսանում են հողատերերի սեփականութիւն: Ճորտացվում են ոչ միայն աւանդները, այլև ստտերադական գերիները, ֆեոդալական կախման վիճակում զրկած բնակիչները և նրանց ընտանիքի անդամները: Այս երևույթն ընդհանուր է եղել բոլոր երկրների համար և չէր կարող բացառութիւն կազմել Հայաստանի պայմաններում:

Մտտենադարանում պահվող ձեռագրերի ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ հայ աշխարհիկ և հողտեր ֆեոդալները ոչ միայն ունեցել են ընդարձակ կալվածներ, արտառւայրեր, այգիներ, բանջարանոցներ, շրագացներ, ձիթհաններ, խանութներ, արհեստանոցներ, անասունների բազմաթիւ հոտեր, այլև ճորտ գյուղացիներ: Այս առաջադրված խնդրի լուծման համար մեզ անգնահատելի վկայութիւններ են տալիս Մտտենադարանում պահպանված № № 3031, 2939 և 8150 ձեռագրերը: № 3031 ձեռագիրը զբղջած է հիմնականում 17-րդ դարում: Գրելը հիշատակում է, որ նա իր աշխատութեանը կազմելիս օգտագործել է Մտտենադարանի Տարոնացու և Կիրակոսի (Գանձակեցու—Ս. Հ.) պատմական աշխատութիւնները և նշում է. «...Եւ միւս ևս գոյր պատմագրքք յորում գրեալ էր, զորոյ անունն ոչ կարացաք գիտել... քանզի կարի փտեալ էր, ոչ սկիզբ կար և ոչ վերջ»¹ Բարեբախտաբար № 8150 ձեռագրի գրելը մեզ թողել է տեղեկութիւն այն մասին, թե ո՞վ էր այդ պատմագրքի հեղինակը: № 8150 ձեռագրի գրելը նույնպես հիշատակում է, որ ինքը աշխատութիւնը շարադրել է Մտտենադարանի Տարոնացու և Կիրակոս Գանձակեցու պատմական աշխատութիւնների հիման վրա և ավելացնում է. «...Եւ այլ ևս բերեց մեծապատիւ վկայ զՄիսիս քաջ քարտուղարն Սանահնու, որ զսբբուհոյ Աստուածածնիս հիմնարկութեան և աւարտման ականատես եղեալ: Այս Միսիս իր գիրն գրել է Յիւթ թվ...» (Այսինքն՝ մեր թվականութեան 972 թ.—Ս. Հ.): Ուրեմն և № 3031, և № 8150 ձեռագրերի հիմքը կազմել է ավելի հին ձեռագիր, որը դժբախտաբար կորած է, քան Մտտենադարանի Տարոնացու և Կիրակոս Գանձակեցու աշխատութիւնները: Ավելին. այդ երկու ձեռագրերում օգտագործված են նաև Սանահնի վանքի վիճակային արձանագրութիւնները, որոնք, մեր կարծիքով, ունեն պատմական ավելի իրական նշանակութիւն

¹ Ձեռագիր № 3031, էջ 36—37.

և արտահայտում են իրենց էպոխայի սոցիալ-տնտեսական կյանքի պատմությունը: Ջեռագրերում հիշատակված բոլոր փաստերը ճորտերի վաճառքի, նրանց դնման մասին՝ ստգորված են մի ընդհանուր իմաստով և ունեն մի նշանակություն, որ և՛ ճորտը և՛ նրա ընտանիքի անդամներն աղատ չեն, անձնագետ պատկանում են տիրոջը և հանդիսանում են գնման ու վաճառքի առարկա: Ահա այդ կարգի մի քանի վկայություններ.

«Ես դուրայխանս մեր կամաւ և օժարութեամբ տվինք մեր նորտունանաց Բիւ ընչացն (մի բառն անընթեռնելի է: Ս. Հ.) դարի հոգն մինչև օրդեղացն հող Սարգիս և Բարսեղ պարոն տիրին (պետք է լինի տերերին: Ս. Հ.) վրա ծախեցինք»:¹

Ինչպես երևում է այս արժեքավոր տեղեկությունից, Դուրայխանը ճորտերին վաճառել է նրանց հողով ու կայքով: Միջնադարյան Հայաստանում ճորտական դիկտատուրայի և անօրինակ շահագործման հետևանքով ճորտերն իրենց ընտանիքներով փախչում էին դաժան տերերից և «աղաստան» գտնում հողևոր ֆեոդալների մոտ: Հավանական է, որ աշխարհիկ և հողևոր ֆեոդալները կատաղի պայքար էին ծավալում ոչ միայն ֆեոդալական կարվածներն ընդարձակելու, այլև բանվորական ձեռքերով այդ կարվածներն ապահովելու համար: Ծորաստերերից մեկը մեզ թողել է հետևյալ արժեքավոր վկայությունը.

«...եկի Սաճախին Արղուքի Որդոցն ի մաւտ, իմ նորտ Ոււլխանն զքայ կուգեի տանեի Արղուքի որդի Սարգիս եպիսկոպոսն մեջ մտաւ ինձանից գնեց. ես իմ կամաւ ծախեցի Բ որդովն Ա աղջկանովն ծախեցի մի դահարի... վկայ են այս բանիս Արղուքի օրդի Սարուխան, հաղբասցի տէր Ովանէս տէր վարդան...»:²

Ինչպես բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում, տիրոջ սեփականատիրական իրավունքը տարածվում էր նաև ճորտի ընտանիքի անդամների վրա և այդ իրավունքը օրինականացված էր: Ծորատերերը վաճառելով ճորտին և նրա ընտանիքի անդամներին, պայմանագիր էին կնքում գնողի հետ և հիշատակարան էին թողնում այն մասին, որ ոչ ոք իրավունք չունի «ի բաց աննել» նրանց:

Պարոն տեր Սարգիս եպիսկոպոսը միջամտում է Սուլխան ճորտի գործերին ոչ թե նրան աղատություն տալու համար, այլ աշխարհիկ ֆեոդալից վանական կարվածները փոխադրելու համար, որպեսզի ճորտը «դուլուղ անի» վանքին:

Ահա այդ վկայությունը.

«Ես սարգիս եպիսկոպոսս գնեցի սուլխանն իր Բ որդոյն և մէկ զըստերոյն... վանքին դուլուղ անեն...»:³

Մեզ հավանական է թվում, որ ճորտերի և նրանց ընտանիքների վաճառքը գուլջով և հողով՝ բացառիկ երևույթնից չէր, այլ կրում էր ընդհանուր բնույթ: Ավելորդ չենք համարում մեզ բերել նաև մի քանի այլ վկայություններ:

¹ Անդ, էջ 423: (Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ ձեռագրի ուղղագրությունը թողել ենք անփոփոխ): Բոլոր դեպքերում ընդգծումները մերն են:

² Ջեռագիր № 3031, էջ 340:

³ Անդ, էջ 341:

«Ես սարգիս պարոն տերս գնեցի Մարթոսն իւր կնկեանով և խիզանով...¹
(Խիզան՝ ընտանիք: Ս. Հ.):

«Ես հախնազարի տղա Գուրայխանս իմ հորտ տեչերեսի տղի(ն), ծախեցի սարգիս պարոն տիրին վրայ...»:²

Հաճախակի են զեպգերը, երբ գրիչները ճորտների փոխարեն հիշատակում են մշակների վաճառքի փաստեր:

«Ի թվիս ՈՀԱ... Ես դաւիթ իշխանս որդի շողրկայ զնեցի զգոռնակագոմի կէսն և շինական մի հալալ աշինի մըշակն...»:³

Այս անչափ կարեոր վկայությունը խիստ աղավաղված է մեջ բերված Կ. Կոստանյանի «Վիժական տարեգրություններ» աշխատության մեջ, Ավելորդ չենք համարում մեջ բերելու Կոստանյանի այդ աղավաղված տեքստը:

«Ես դաւիթ իշխան որդի Շոթուկայ [ձեռագրում՝ շողրկայ] զնեցի զՈւղնակ Գոմի [ձեռագրում՝ զգոռնակագոմի] կէսն շինականի [ձեռագրում՝ և շինական մի] ի հալալին [ձեռագրում՝ հալալ աշինի մըշակը]...»:⁴

Եզակի չեն զեպգերը, երբ տերը վաճառում է շինականին հողով, տնով, տեղով և ամբողջ գույքով: Ահա այդ կարգի մի քանի վկայություններ.

«...ես պարոն ատիրեկա...մեր ունակա ծիլ շինականն հող ու ջուր որ կէսն վրայ սարգիս տէրին ծախել ինք ավետիսի տուն ու տեղն կալ ու մարագն քովն ու դուռն առացն գեղումն ու սարումն ինչ տուն ու տեղ ունի են էլ ծախեցինք ա. հախն առտեմ... մեր յօժտը կամօք ռոնակա շինակամքն իւրեանց հողովն ու ջրովն ծախեցինք... այտուհետև ոչ խարնի ոչ կոռի և ոչ եեծեղի բան չունիք...»:⁵

Ինչպես երևում է, այստեղ հիշատակված շինականներն իրենց սոցիալական կացությամբ և քաղաքական իրավունքներով հավասարված էին ճորտերին և նույնպես համարվում էին տիրոջ սեփականութունը: Շինականները, բացի հարկադիր աշխատանքներից, վճարում էին նաև խարջ-հարկ: Որ շինականների տունն ու տեղը, հողն ու ջուրը պատկանում էին տիրոջը, որ նա լիակատար տեր էր իր գյուղացիներին վրա, այդ պարզ երևում է նաև հետևյալ վկայություններին:

«Ես պարոն գասպարս մեր կամա... շինական շիխու մխիթարո, ակոբն խեչիկնն ծախեցինք վրայ սարգիս պարոն տիրին... իրենց տնովն իրենց տեղովն իրենց հողովն իրենց ջրովն... իրն պարոն, ճորտ ազգական ոչ ընդունի նրա հետ բան չունի...»:⁶

«Վիժական տարեգրություններ»-ում կան նույնպես բազմաթիվ վկայություններ, որ տեր Բարսեղն ուներ ոչ միայն ընդարձակ կալվածներ, սեփական գյուղեր, այլև «Է՛ գեղ շինական...»:⁷

Շինական գյուղացին առանց տիրոջ համաձայնության իրավունք չուներ տնօրինելու իր հողակտորը և կայքը: Եթե տերը գեր և համաձայ-

¹ Անդ, էջ 343:

² Անդ, էջ 205:

³ Կ. Կոստանյան, «Վիժական տարեգրություններ», էջ 85:

⁴ Ձեռագիր № 3031, էջ 303-4, նաև 307-8:

⁵ Անդ, էջ 413:

⁶ Անդ, էջ 413

⁷ Կ. Կոստանյան, «Վիժ. տար.», էջ 249:

նություն չէր տվել, ապա նա կարող էր շինականին ստիպել, որպեսզի վերջինս կատարի իր կամքը:

Են սարգիս հախնազարս մեր շինական զուկաս պարոն տէրին Ջորուսն հող էր առել գեղում հող էր տվել առանց մեր գիր առանց մեր վկայութիւն մենք էն զպուլ չարինք...պարոն տէր սարգսին դաւիցանք դարմազ բէկին հասկցցինք նորա փորտին բէրինք... հախ էլաւ թէ կուզի ծախի թէ մարդի բաշխի մենք էլ միջում դաւի չունինք...»¹

Այստեղ ճորտերի և շինականների միջև նույնպես հավասարութեան նշան է դրված: Տիրոջ համար և՛ ճորտը, և՛ շինականը իրենց սոցիալական դրութեամբ նույնն են և նա նրանց հետ կարող է վարվել այնպես, ինչպես ինքն է ցանկանում:

Ճորտատերերի և ճորտերի միջև դասակարգային սուր պայքարը չի դադարել միջնադարյան Հայաստանում: Եթե ճորտատերերի նշանաբանն էր՝ «...մարդ հանգիստ պառկի, դատում չանի և ոչ աշխատի, այլ զայլոց վատակն ուտի...»², ապա ճորտերն ու շինականները պայքարում էին ազատվելու տիրոջ գերիշխանությունից: Ծահագործվող դասերը դիմելով տերերին, հայտարարում են՝ «զհաց քոյ ոչ ուտեմք և զհանդերձս քոյ ոչ ըզգենումք, ոչ ունիս իշխանութիւն ի վերայ մեր», կամ՝ «զհաց քո ուտեմք և զհանդերձ քոյ զգենումք ոչ կամիմք ծառայել քեզ...»³

Տնտեսական դարաշրջանի գրիչը իր այս արտահայտություններով տվել է դասակարգային հարաբերությունների և պայքարի բնորոշ մոմենտներին մեկը՝ ճորտերն ու շինականները, որոնք ապրում էին տիրոջ հաշվին, հազնում էին նրա հազուստը և ուտում նրա հացը, չէին ցանկանում ենթարկվել տիրոջ իշխանութեանը, իսկ գրիչը դա համարում էր «չարագոյն» և վտանգավոր երևույթ ու պահանջում էր խիստ պատժել այդ գաղափարը կրողներին:

Դատելով ձեռագիր արքայուհիների շարադրանքից ու լիզվից, մեզ թվում է, որ բերված փաստերը վերաբերում են 14—17 դարերին:

Առայժմ մեր ձեռքի տակ եղած պատմական այս փաստերը դեռ մեզ հնարավորություն չեն տալիս ճորտական իրավունքն ընդհանրացնել ամբողջ Հայաստանի նկատմամբ: Բայց դժվար է պնդել և ապացուցել, թե ճորտերի վաճառքի ու գնման այս փաստերը բացառիկ երևույթներ էին միջնադարյան Հայաստանում: Ավելի հավանական է թվում, որ այդ երեքվույթ մասսայական բնույթ էր կրում, հակառակ դեպքում փորտամիտ գործածությունը և ճորտերի առուծախի այս փաստերը, որոնք պատահական չեն, անհասկանալի կլինային: Թվում է, որ ճորտերի վաճառքի այս փաստերն ուշագրավ փաստեր են, որովհետև մենք ձեռագրերում չենք հանդիպում և ոչ մի ակնարկի, որ գրիչները ճորտերի մասին իրենց հազորգած տեղիկությունները համարեն ինչ-որ արտակարգ և արտասովոր բան: Ընդհակառակը, ամբողջ շարադրանքից ստացվում է այն ապավորությունը, որ և՛ ճորտերի ու շինականների վաճառողները, և՛ նրանց գնողները այն

¹ Ձեռագիր № 3031, էջ 388—89:

² Ձեռագիր № 2939, էջ 379:

³ Անդ, էջ 91:

համարում էին հասարակական կյանքի նորմալ երևույթ, իսկ տիրապետող օրենքները հաստատում ու օրինականացնում էին տիրոջ իրավունքը ոչ միայն ճորտի, այլև նրա ընտանիքի ու կայքի նկատմամբ: Ճորտատերերն իրավունք են ունեցել ճորտերին ու ճորտացված շինականներին նվիրել, կտակել, վաճառել, գնել, պատժել, զրկել սեփականությունից և այլն: Ամենից առաջ, հենց այն պատմական իրողությունը, որ ճորտատերն իրավունք ուներ հետապնդելու, որոնելու և ետ բերելու իր ճորտին ու նրա ընտանիքին—ապացույց է այն բանի, որ այդ իրավունքը տարածված և օրինականացված երևույթ էր միջնադարյան Հայաստանում:



A^{II}
33590

2288

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



220033590

(104)

A $\frac{11}{33590}$